

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ  
ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«    » \_\_\_\_\_ 2026    N    -Ն

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.1-ին հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2026 թվականի

«    » \_\_\_\_ N...-Ն որոշման

**ՄԵԹՈԴ**

**ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ԾԱՆՐԱԲԵՈՒՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ**

**ՈՐՈՇՄԱՆ**

1. Ջրային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը երկրի կամ գետավազանի մակարդակով օգտագործելի ջրային ռեսուրսների վրա գումարային ջրօգտագործման ազդեցության չափն է:

2. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը բնութագրում է ջրային ռեսուրսների օգտագործման համապատասխանությունը երկրի ջրային կարիքներին և արտահայտում է ջրօգտագործման ճնշումը ջրային ռեսուրսների վրա: Նշված ցուցանիշը հիմք է հանդիսանում ջրառի վերլուծության և գնահատման համար՝ ըստ ջրօգտագործման ոլորտների:

3. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը որոշվում է ջրավազանային կառավարման պլաններով սահմանված գումարային ջրօգտագործման ծավալի (ջրապահանջարկ) և օգտագործելի ջրային ռեսուրսների ծավալի (ջրառաջարկ) հարաբերությամբ՝ *արտահայտած տոկոսով*: *Ջրավազանային կառավարման պլանի* ժամկետի ավարտից հետո՝ մինչև նոր ջրավազանային կառավարման պլանի ընդունումը, հաշվարկի համար հիմք են ընդունվում նախորդ ջրավազանային կառավարման պլանի վերջին տարվա տվյալները:

4. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՋՌԾԱ) երկրի կամ գետավազանի մակարդակով որոշվում է հետևյալ բանաձևով?

որտեղ՝

ԳԶՕ - գումարային ջրօգտագործումն է,

ՕԶՌ - օգտագործելի ջրային ռեսուրս:

5. Գումարային ջրօգտագործումը գետավազանում կամ ջրային մարմնում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսներից բոլոր ջրօգտագործողների կողմից տարեկան օգտագործված ջրի գումարային քանակությունն է.

$$\text{ԳԶՕ} = \text{ՄԳԶՕ} + \text{ՍԳԶՕ},$$

որտեղ՝

ՄԳԶՕ - մակերևութային գումարային ջրօգտագործումն է,

ՄԳԶՕ - ստորերկրյա գումարային ջրօգտագործումը:

6. Օգտագործելի ջրային ռեսուրսները մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսների և ստորերկրյա ջրերի օգտագործելի (վերականգնվող) *պաշարների գումարային քանակությունն է.*

$$ՕԶՌ = ՄՕԶՌ + ՍԶՕՊ,$$

որտեղ`

ՄՕԶՌ - մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսն է,

ՍԶՕՊ - ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարը:

7. Մակերևութային օգտագործելի ջրային ռեսուրսները (ՄՕԶՌ) որոշվում են մակերևութային ջրային ռեսուրսների և էկոլոգիական թողքի տարբերությամբ.

$$ՄՕԶՌ = ՄԶՌ - ԷԹ,$$

որտեղ`

ՄԶՌ - մակերևութային ջրային ռեսուրսն է,

ԷԹ - էկոլոգիական թողքը:

8. Ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարները (ՍԶՕՊ) որոշվում են ստորերկրյա ջրային ռեսուրսների, ստորերկրյա ազգային պաշարների և ստորերկրյա ռազմավարական պաշարների տարբերությամբ.

$$ՍԶՕՊ = ՍԶՌ - ՍԱՊ - ՍՌՊ,$$

որտեղ`

ՍԶՌ - ստորերկրյա ջրային ռեսուրսն է,

ՍԱՊ - ստորերկրյա ազգային պաշարն է,

ՍՌՊ - ստորերկրյա ռազմավարական պաշարը:

9. Ստորերկրյա ջրերի օգտագործելի պաշարները գետավազաններում ստորերկրյա ջրավազանների հաստատված օգտագործելի պաշարներն են:

10. Մակերևութային ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՄՁՌԾԱ) որոշվում է հետևյալ բանաձևով.

11. Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանը (ՄՁՌԾԱ) որոշվում է հետևյալ բանաձևով.

12. Բանաձևերի բոլոր պարամետրերի չափողականությունն արտահայտվում է մլն. ս<sup>3</sup>-ով:

13. Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման արժեքները դասակարգվում են 4 դասի.

- 1) **Զծանրաբեռնված** < 25%
- 2) **Ցածր ծանրաբեռնված** 25% - 65%
- 3) **Միջին ծանրաբեռնված** 65% - 100%
- 4) **Ծանրաբեռնված** > 100%

14. Ջրային ռեսուրսի չծանրաբեռնված աստիճանի դեպքում ջրային ռեսուրսի օգտագործումը համարվում է անվտանգ և կայուն, իսկ ջրօգտագործման ճնշումը՝ նվազագույն:

15. Ջրային ռեսուրսի ցածր ծանրաբեռնվածության աստիճանի դեպքում ջրային ռեսուրսի օգտագործումը համարվում է արդյունավետ և կայուն, իսկ ջրօգտագործման ճնշումը՝ կառավարելի:

16. Ջրային ռեսուրսի միջին ծանրաբեռնվածության աստիճանի դեպքում ջրային ռեսուրսի օգտագործումը համարվում է ռիսկային, երբ ջրօգտագործման ճնշումը մոտենում է թույլատրելի առավելագույն շեմին:

17. Ջրային ռեսուրսի ծանրաբեռնված աստիճանի դեպքում ջրային ռեսուրսի օգտագործումը համարվում է գերշահագործում: Ծանրաբեռնված

աստիճանի դեպքում նոր ջրօգտագործման թույլտվություններ չեն տրամադրվում, իսկ ջրօգտագործման առաջնահերթության գերակա ուղղությամբ (մարդկանց բարեկեցության, շրջակա միջավայրի պահպանության ու բարելավման, ոռոգման նպատակներով) ջրօգտագործման անհրաժեշտություն առաջանալու դեպքում ջրօգտագործողներին թույլատրված ջրօգտագործման ծավալները, Ջրային օրենսգրքի 33.1-ին հոդվածի համաձայն վերանայվում են՝ առաջին հերթին ապահովելով խմելու ջրամատակարարման և ջրահեռացման գերակայությունը: